ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

ՔԱՂՎԱԾՔ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2023 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Երևան

2023 թվականի ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն (14588 ձայնի իրավունքով), ի դեմս «Ա» կարգի մենեջեր Վարտան Սիրմակեսի և «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն (ձայների քանակը՝ 2079), ի դեմս լիազորված անձ Վարտան Սիրմակեսի:

Նիստին մասնակցում էր նաև Ռաֆֆի Բալյոզյանը:

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 16667) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովի Նախագահ ընտրվեց Վ. Սիրմակեսը, իսկ ժողովի քարտուղար՝ Ռ. Բալյոզյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը,
2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2022 թվականի շահույթի բաշխման մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

Առաջին հարցով
(զեկուցող՝ Ռ. Բալյոզյան)

1. Հաստատել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2022 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ հաշվի առնելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի արտաքին աուդիտն իրականացնող «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ներքին աուդիտի եզրակացությունները

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2023թ. ապրիլի 30-ից:

Երկրորդ հարցով
(զեկուցող՝ Ր. Բալյոզյան)՝

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2022 թվականի ֆինանսական տարվա 7,139,725,000 ՀՀ դրամ զուտ (հարկումից հետո) շահույթից 5,000,000,000 ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 40,000,000,000 ՀՀ դրամ, իսկ մնացած 2,139,725,000 ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2023թ. ապրիլի 30-ից:

Սույն արձանագրությունը կազմված է 30.04.2023թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից:

Ժողովի նախագահ՝ /ստորագրություն/ Վ.Սիրմակես

Քարտուղար՝/ստորագրություն/ Ր. Բալյոզյան

Քաղվածքն արված է 02.05.2023թ.-ին՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 30.04.2023թ.-ի թիվ 01-2023 արձանագրության բնօրինակից:

Գործադիր տնօրեն՝ Գևորգ Մաչանյան